ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ համայնք Լերմոնտովո
lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 62

03.08.2022թ

ՎԱՀԱՆ ՄԱՄՈՒԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱԵԼՈՒ, 06-043-0106-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 1993 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, "Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին" ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ թիվ 698-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վահան Մամուլյանի դիմումը, հողամասի հաստատված հատակագիծը, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերումը հաստատող գրանցման փաստաթղթերը, սեփականության վկայականը՝ հաշվի առնելով պետական գրանցման ժամանակ տեղի ունեցած սխալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 06-043-0106-0001 ծածկագրով հողամասը հատկացման օրվանից մինչ օրս օգտագործվել և տիրապետվել է Վահան Մամուլյանի կողմից որպես սեփականություն, որի վրա 1993 թվականին կառուցվել է բնակելի տուն և պարիսպ, վճարվել է օրենքով սահմանված հարկերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կատարել Վահան Հակոբի Մամուլյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի մակերեսի ուղղում՝ 06-043-0106-0001 ծածկագրով 0,1064 հա մակերեսը ուղղել 0,097532 հա մակերեսով.
2. ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնքի 06-043-0106-0001 ծածկագրի տակ գտնվող 0,097532 հա մակերեսով հողամասում գտնվող 1993 թվականին կառուցված 198,4 քմ բնակելի տան և 2,27 քմ պարիսպի նկատմամբ սխալի ուղղման հիմքով վերականգնել և ճանաչել Վահան Հակոբի Մամուլյանի սեփականության իրավունքը:
3. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, բնակելի տունը և պարիսպը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Էդիկ Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 63

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0106-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վահան Հակոբի Մամուլյանին սեփականության իրավունքով պատկանող 06-043-0106-0001 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին՝ 0,097532 հա հողամասին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, "Թեժ լեռ" թաղամաս 1փ. 10 փկղ. թիվ 17:

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**